Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը

ք.Հրազդան 25.03.2022թ. ժամը 11.00

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Վ.Վարդանյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Հ.Մկրտչյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Մ.Գևորգյան- ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Հ.Ալեքսանյան- ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Ս.Բաղդասարյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
-Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ
-Մարզի համայնքների վարչական տարածքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
/զեկուցող՝ ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան/

2. Սեփական եկամուտների հավաքագրման վիճակը մարզի համայնքներում:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Ասատրյան/

3. Քաղաքաշինության բնագավառում առկա խնդիրների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի խորհրդական Հ.Վարդանյան/

4. Այլ հարցեր
4.1 Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական ընթացքը:
/ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/
4.2 Մարզի համայնքներում կորոնավիրուսային պատվաստման ընդգրկվածության ցուցանիշները:
/ՀՀ Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական Մ. Բալյան/
4.3 ՀՀ Կոտայքի մարզպետին ՀՀ Կոտայքի դատախազի կողմից ուղարկված թիվ 20164719 քրեական գործով միջնորդագրի ներկայացում:
/ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյան/
4.4 Համայնքներ ուղարկվող գրությունների ժամկետների պահպանման մասին հայտարարություն:
/ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյան/

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի զեկույցը մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իրավական և մասնագիտական վերահսկողության արդյունքում արտակարգ իրավիճակների և պաշտպանության, առևտրի ծառայությունների, կրթության և մշակույթի, տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների, ֆինանսների, քաղաքաշինության, հողօգտագործման, բնապահպանության, առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու, ինչպես նաև դրանք հետագայում բացառելու ուղղությամբ:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Ասատրյանի զեկույցը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել գործուն քայլեր սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը բարելավելու ուղղությամբ, ինչպես նաև բյուջեն պլանավորելիս՝ հնարավորինս առաջնորդվել եկամուտների պլանային ցուցանիշների հավասարաչափ համամասնություններով՝ ըստ եռամսյակների:

3.ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի խորհրդական Հ.Վարդանյանի զեկույցը քաղաքաշինության բնագավառում առկա խնդիրների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել համապատասխան միջոցներ համայնքների վարչական սահմաններում գտնվող ինքնակամ շինությունների հաշվառման և կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում օրինականացնելու ուղղությամբ, ինչպես նաև հետագայում բացառել իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ինքնակամ շինարարությունների և հողազավթումների դեպքերը:

4. Այլ հարցեր

4.1 *ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյանը հանդես եկավ գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական ընթացքի վերաբերյալ հայտարարությամբ՝ մասնավորապես անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման աջակցության» ծրագրին, գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերից օգտվող հնարավոր շահառուների, վիճակագրական հաշվետվությունների ներկայացման և գյուղացիական տնտեսությունների կողմից ապահովագրական ծառայություններից օգտվելու գործընթացներին:*

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել համայնքների վիճակագրական հաշվետվությունները:

-Բնակիչների շրջանում ակտիվ աշխատանքներ տանել՝ ներկայացնելով ապահովագրական ծառայություններից (կարկտահարության, հրդեհի, ցրտահարության և այլն) օգտվելու շահավետ մանրամասները:

4.2 *ՀՀ Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական Մ. Բալյանը ներկայացրեց մարզի համայնքներում կորոնավիրուսային պարտվաստման ընդգրկվածության ցուցանիշները:*

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ակտիվ աշխատանքներ տանել համայնքներում կորոնավիրուսային պատվաստման ընդգրկվածության ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

4.3 *ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ա.Վարդանյանը ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզպետին ՀՀ Կոտայքի դատախազի կողմից ուղարկված թիվ 20164719 քրեական գործով միջնորդագիրը:*

4.4 *ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Լ.Պետրոսյանը հանդես եկավ համայնքներ ուղարկվող գրությունների ժամկետների պահպանման մասին հայտարարությամբ:*

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Գրությունների կազմման գործընթացում պահպանել մարզպետարանից ստացված գրություններում նշված կատարման ժամկետները:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ահարոն Սահակյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին շարունակել համատեղ արդյունավետ աշխատանքը՝ կյանքի կոչելու բոլոր ձեռնարկներն ու ծրագրերը:

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ